տեւ Զենոբ Գլակը գործակից եղաւ Լուսաւորչին այդ վանքի կառուցանելու ժամանակ, այդ պատճառով վանքը կոչուեցաւ եւ Գլակայ վանք: Այդ վանքը այսօր էլ կայ եւ ոչ միայն Տարօնի, այլ ամբողջ Հայաստանի ամենանշանաւոր վանքերից մէկն է: Էջմիածնից յետոյ նրան կարելի է դնել: Գուցէ ձեզ յայտնի է, որ Ս. Կարապետի վանքը առաջ մի կռատուն էր, հնդկացի գաղթականներից ամենահին ժամանակներում հիմնուած: Լուսաւորիչը այդ կռատունը քանդեց եւ նրա տեղում Ս. Կարապետի վանքը հիմնեց: Այդ բոլորը ասում եմ ձեզ, որ այդ վանքի մասին փոքր-ինչ պատմական գաղափար ունենաք, բայց բանը դրանում չէ: Ս. Կարապետի վանքը, դեռ կռատուն եղած ժամանակ, ունէր իր շրջակայքում տասնեւերկու գիւղեր, իբրեւ վանական սեփականութիւն: Երբ կռատունը քրիստոնէական տաճարի փոխուեցաւ, Լուսաւորիչը նոյն գիւղերը դարձեալ թողեց, որպէս նոյն վանքի ժառանգութիւն: Դժբախտաբար Զենոբը իր գրքի մէջ յիշեալ տասներկու գիւղերից միայն եօթնի անուններն է յիշում, բայց այդքանը եւս շատ բան է ապացուցանում այն ժամանակի վիճակագրութեան համար: Ես կը կարդամ ձեզ նրանց անունները, թէ իւրաքանչիւրը քանի երդ, այսինքն ծուխ ունէր, եւ որքա՜ն զօրք կարող էր դուրս բերել պատերազմի ժամանակ:

Նա սկսեց փոքրիկ թղթի պատառի վրայ կարդալ եօթն գիւղերի անունները, որ դուրս էր բերել Զենոբի գրքից:

1. Կոառս ունէր 3.012 երդ կամ ծուխ, 1.500 հեծեալ, 2.200 հետեւակ զօրք: 2. Մեղդի՝ 2.080 երդ, 800 հեծեալ, 1.030 հետեւակ: 3. Խորտում՝ 900 երդ, 400 հետեւակ: 4. Խորնի՝ մեր Մովսէս Խորենացու ծննդավայրը 1.906 երդ, 700 հեծեալ, 1.008 հետեւակ: 5. Կեղք՝ 1.600 երդ, 800 հեծեալ, 600 հետեւակ: 6. Պարեխ՝ 1.680 երդ, 1.030 հեծեալ, 600 հետեւակ: 7. Բազում՝ 3.200 երդ, 1.040 հեծեալ, 8.040 աղեղնաւոր, 600 տէգաւոր, 280 պարսաւոր:

Ուրեմն 7 գիւղը ունեցել է 14.378 երդ կամ ծուխ: Եթէ իւրաքանչիւր ծուխը հաշուելու լինենք 10 հոգի, ինչպէս հաշուեցինք Մուշի գիւղորայքի այժմեան ծուխերը, կը ստանանք 143.780 հոգի: Կնշանակէ՝ հին Տարօնի միայն եօթն գիւղը ունեցել է 63.780 բնակիչ աւելի, քան թէ ունի այժմեան ամբողջ Տարօնը իր բոլոր գիւղերով եւ Մուշ քաղաքով: Դա սարսափելի՛ տարբերութիւն է, — կրկնեց նա, — դա մինչեւ անգամ անհաւատալի է թւում: Բայց ես բոլորովին հաւատում եմ Զենոբի թուանշաններին, նա չափազանց ճշմարտասէր մարդ էր: Բայց որքա՜ն ուրիշ շատ գիւղեր, աւաններ եւ քաղաքներ կային այն ժամանակ Տարոնում...

Նա լռեց, թախծալի մռայլը կրկին պատեց նրա պայծառ դէմքը: